2-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ
ԹԵՄԱ 4 – ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ

Ուսուցչի նյութերի փաթեթ

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԹԵՄԱ 4 - ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ
ԴԱՍ 1 (29) - ԱՐԱՐՔ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ

Նպատակը - Ձևավորել դրական վերաբերմունք կանոններին և դրանց կարևորությանը, իրենց և ուրիշների իրավունքները պաշտպանելու համար դրանց անհրաժեշտության գիտակցություն, իրավունքների և պարտականությունների փոխկապվածության ընկալում և բարեկիրթ շփման հմտություններ:
Օգնել հասկանալու արարքների և հետևանքների կապը, օրինակներով ցույց տալ, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ՝ թե՛ դրական, թե՛ բացասական:

Անհրաժեշտ պարագաներ
Չկան

Վերջնարդյունքներ
2Շ.Մ.Փ.Դ1ա Պահպանել, կիրառել դասարանական կանոնները:
2Շ.Մ.Փ.Ի2 Մեկնաբանել, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ, թե՛ դրական, թե՛ բացասական:

Ընթացքը
«**Ես և շրջակա աշխարհը**» **առարկայի** 3-**րդ դասարանի գործող դասագրքի՝ թեմա** 1, **դաս** 2, **էջ** 19 **–** 22-**ի նյութերը**.
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս 1

1. Ուսուցիչը դասը սկսում է դասարանական կանոնների մասին քննարկմամբ: Աշակերտները պետք է կարողանան մեկնաբանել, թե կանոնները պահպանելը կամ չպահպանելը ինչ հետևանքներ կարող են ունենալ ընկերական փոխհարաբերություններում, թե դրական կամ բացասական արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ: Պետք է անդրադարձ կատարել «**Պատճառ և հետևանք**», «**Անհատ և հարաբերություններ**» խաչվող հասկացություններին:
2. Այնուհետև առաջարկում է, զույգերով աշխատելով, մշակել դասարանական կանոններ: Կարևոր է, որ այդ կանոնները առաջարկեն աշակերտները, միասին ընտրեն և ընդունեն դրանք: Պետք է կարողանան մեկնաբանել, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ, թե՛ դրական, թե՛ բացասական:
3. Ուսուցիչը աշակերտներին խնդրում է նայել նկարները և որոշել, թե որ նկարներում են երեխաներն իրենց սխալ պահում: Այնուհետև փորձում է պարզել, թե երեխաներն ինչու են այդպես կարծում, իրենք ինչպես կվարվեն, երբ են իրենց լավ զգում, ո՛ր արարքից հետո:

4. Ուսուցիչը երեխաների համար ընթերցում է վերևում հիշատակված դասագրքի 19-20-րդ էջերի՝ Տիգրանի մասին պատմությունը: Պատմությունը ակնառու ցույց է տալիս, թե ինչ արարքներ է կատարում Տիգրանը: Կարդալու ընթացքում երեխաները ծափ են տալիս այն ժամանակ, երբ կարծում են, որ Տիգրանը վատ արարք է կատարել: Առաջադրանքը ապահովում է միջառարկայական կապը **Մայրենիի** հետ: Պատմությունը կարդալուց հետո ուսուցիչը հանձնարարում է դուրս գրել Տիգրանի վատ արարքները՝ դիմացը նշելով, թե այն ինչ հետևանք կարող է ունենալ:

5. Դասարանում ուսուցիչը ընթերցում է նաև «Սուտասանը» պատմությունը, որից հետո ծավալում է քննարկում հարցերի միջոցով՝ ցույց տալով արարքի և հետևանքի փոխադարձ կապը: Դարձյալ միջառարկայական կապ **Մայրենիի** հետ: Ինչպես այս դասի, այնպես էլ ողջ թեմայի ընթացքում պետք է անդրադարձ անել «**Պատճառ և հետևանք**», ինչպես նաև «**Անհատ և հարաբերություններ**» խաչվող հասկացություններին՝ փորձելով հասկանալի դարձնել յուրաքանչյուրի դերը դրական, հարգալից, առողջ և պատասխանատու փոխհարաբերություններ ստեղծելու հարցում, կանոնները պահել-չպահելու հետևանքները, արարքի դրական կամ բացասական հետևանքները, իրավունքները խախտել-չխախտելու, անպատասխանատու վերաբերմունքի հետևանքները և այլն:

6. Տնային աշխատանք:

7. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 2 (30) – ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակը – Ձևավորել պատկերացումներ իրավունքների և պարտականություն-ների մասին, ցույց տալ դրանց փոխկապվածությունը:
Օգնել, որ աշակերտները գիտակցեն իրենց պարտականությունները դպրոցում, դասարանում:

Վերջնարդյունքներ

2Շ.Մ.Փ.Ի1 ***Նկարագրել յուրաքանչյուրի դերը, իրավունքները, պարտակա-նությունները դպրոցում, դասարանում, նշել դրանց կարևորությունը:***

Անհրաժեշտ պարագաներ
Քարտեր

Ընթացքը

1. Ուսուցիչը դասը սկսում է հարցերով՝ պարզելու, թե ինչ գիտեն երեխաները իրավունքների և պարտականությունների մասին:
2. Այս վարժությունը կատարելու համար ուսուցիչը դասարանը խմբերի է բաժանում և յուրաքանչյուր խմբին տալիս է «**Իրավունք**», «**Պարտականություն**», «**Ցանկություն**» քարտերի մեկական ծրար, մեկական A1 թուղթ՝ վերնագրված **ա**) **Իրավունք** (**Կարող եմ**)
բ) **Ցանկություններ** (**Ուզում եմ**), **գ**) **Պարտականություններ** (**Կարող եմ**):
Խմբով աշխատելով՝ երեխաները ծրարի միջից ընտրում և պաստառին փակցնում են իրենց պաստառի վերնագրին համապատասխան քարտերը: Երեխաներին կարելի է ասել, որ կարող նաև իրենք ավելացնել: Աշխատանքը վերջացնելուց հետո պաստառները փակցնում են դասարանի պատին՝ կողք կողքի: Միմյանց աշխատանքներին ծանոթանալուց հետո կազմակերպվում է քննարկում հարցերի միջոցով: Կարևոր է, որ աշակերտները կարողանան ինքնուրույն հետևություններ անել, հասկանալ՝ որն է իրավունք, որը՝ պարտականություն, ինչ բան է ցանկությունը, կարողանան համապատասխան իրավունքն ու ցանկությունները գունավոր գծերով միացնել պարտականություններին: Այս վարժությունը օգնում է զանազանելու իրավունքներն ու պարտականությունները, ձևավորում է որոշում կայացնելու, համագործակցելով կողմնորոշվելու հմտություններ: Պետք է անդրադարձ կատարել «**Անհատ և հարաբերություններ**», ինչպես նաև «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացություններին՝ հասկանալով իրավունքների և

պարտականությունների կապը, կանոնները պահպանելու և դրանով իրենց և մյուսների իրավունքները հարգելու և չխախտելու կարևորությունը:

3. Հաջորդ առաջադրանքում ուսուցիչը խնդրում է նայել նկարներին և գտնել, թե որ նկարը որ իրավունքի մասին կարող է հուշել: Նկարների տակ տեղադրված տողերի վրա երեխաները կարող են գրել իրենց պատասխանները, հետո քննարկել մյուս խմբերի հետ:
4. Հաջորդ քայլը ապահովում է **Մայրենիի** հետ միջառարկայական կապ: Ուսուցիչը կամ որևէ լավ կարդացող երեխա ընթերցում են պարտականությունների և իրավունքների մասին փոքրիկ տեքստը՝ ամբողջացնելով իրենց պատկերացումները:
5. Հաջորդ առաջադրանքը դարձյալ նախատեսված է խմբային քննարկման համար: Աշակերտները խմբով քննարկում են իրենց խմբին բաժին ընկած իրավիճակները, կատարում են եզրակացություններ: Կարևոր է, որ նրանք ինքնուրույն գտնեն պարտականությունների և իրավունքների միջև եղած կապը, ինքնուրույն հետևություններ անեն, գիտակցեն, որ երբ մարդկանց մի խումբ իր պարտականությունը չի կատարում, ապա մարդկանց մեկ ուրիշ խումբ դրանից տուժում է, խախտվում է նրանց համապատասխան իրավունքը: Պետք է անդրադարձ կատարել «**Պատճառ և հետևանք**», «**Անհատ և հարաբերություններ**» խաչվող գաղափարներին (հասկանալ իրավունքների և պարտականությունների կապը, կանոնները պահպանելու և դրանով իրենց և մյուսների իրավունքները հարգելու և չխախտելու կարևորությունը):
6. Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է դասի վերջում փոքրիկ ուղղանկյան վրա՝ մեկ անգամ ևս ցույց տալով մի քանի իրավունքներ:
7. Տնային աշխատանք:
8. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 3 (31) – ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ

Նպատակը – Նպաստել հանդուրժողականության ձևավորմանը, համագործակցությանը, փոխըմբռնման և փոխզիջման ճանապարհով կոնֆլիկտները հարթելուն: Ձևավորել փոխադարձ վստահության մթնոլորտ, որն էական է ընկերական փոխհարաբերություններում և կոնֆլիկտները խաղաղ հարթելու հիմք է:

Վերջնարդյունքներ
2Շ.Մ.Փ.Կ1 Խուսափել վեճերից, կռիվներից, փորձել խոսել, հաշտվել միմյանց հետ:
2Շ.Մ.Փ.Կ1բ Բացատրել՝ ինչ է կոնֆլիկտը և ինչպես այն խաղաղ լուծելու ձևեր գտնել:

Անհրաժեշտ պարագաներ

1. «**Կամակոր իշուկները**» (**կտրտելու համար**):
2. **Քարտեր՝ պատմություններով**:

Ընթացքը

1. «**Կամակոր իշուկները**» համագործակցային վարժություն է, որը օգնում է քննադատաբար և ստեղծագործաբար մտածել, որոշում կայացնելու համար գտնել այլընտրանքային լուծումներ, կոտրել ստերեոտիպային մտածողությունը:
   Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ ծրար՝ «Կամակոր իշուկները» պատմությունը: Խմբերին հանձնարարվում է գտնել իշուկների պատմության հավանական ընթացքը և նկարների երիզները A4 թղթի վրա շարել հերթականությամբ: Այնուհետև խմբերը շրջելով ծանոթանում են մյուսների աշխատանքներին, ապա անցկացվում է քննարկում հարցերի միջոցով: Կարևոր է, որ աշակերտները հասկանան՝ կարելի է գտնել կոնֆլիկտների հարթման այլ տարբերակներ: Օրինակ՝
   - պարտություն- պարտություն
   - հաղթանակ- պարտություն
   - հաղթանակ-հաղթանակ

   Աշխատանքը կատարելիս ապահովվում է **միջառարկայական** կապ **Տեխնոլոգիայի** հետ:
2. Հաջորդ աշխատանքը կատարելու համար ուսուցիչը դասարանը բաժանում է 6 խմբի, առաջարկում է նայել նկարները, ընտրել դրանցից որևէ մեկը, հորինել պատմություն այդ նկարի շուրջ, տալիս է ժամանակ աշխատելու համար, հետո խմբի անդամներից մեկը ներկայացնում է այդ պատմությունը: Շատ կարևոր է, որ ցանկացած իրավիճակ հորինելիս երեխաները կարողանան ցույց տալ

հաշտության ճանապարհները, նշեն, թե ինչպես կարելի է լուծել ծագած խնդիրը, որ կոնֆլիկտ չլինի:

3. Խմբերին տրվում են քարտեր՝ պատմություններով, երեխաները կարդում են, խմբի ներսում կատարում դերաբաշխում և փորձում են բեմադրել պատմությունները: Երբ բոլոր խմբերը ավարտում են ներկայացումները, կատարում ենք վերլուծություն, քննարկում՝ ով տուժեց, ով շահեց, ինչու են այդպես կարծում և այլն: Այս վարժությունը ապահովում է միջառարկայական կապ **Արվեստի** հետ:

   Ամբողջ դասի ընթացքում պետք է անդրադարձ կատարել «**Պատճառ և հետևանք**», «**Անհատ և հարաբերություններ**» խաչվող հասկացություններին:
4. Տնային աշխատանք:
5. Ձևավորող գնահատում:

ԴԱՍ 4 (32) – ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

Նպատակը – Օգնել գիտակցելու, որ աննրբանկատ, կոպիտ վարքագիծը հաճախ կարող է ընդհարման պատճառ դառնալ, որ կշռադատված, քաղաքավարի, բարեկիրթ պահվածքը կարող է օգնել, կանխել ընդհարումը:
Նպաստել համագործակցային կարողությունների զարգացմանը, մշակել խմբով կամ զույգով աշխատելու կարողություններ:

Վերջնարդյունքներ

2Շ.Մ.Փ.Կ1ա Կիրառել քաղաքավարության կանոնները, պատրաստակամ լինել խմբով կամ զույգերով աշխատելիս:

Անհրաժեշտ պարագաներ

1. Բարեկիրթ կանոնների ցանկ:
2. Իրավիճակային քարտեր:
3. «Հրաշալի բառը» տեքստ:

Ընթացքը

«**Ես և շրջակա աշխարհը**» **առարկայի** 3-**րդ դասարանի գործող դասագրքի՝ թեմա** 2, **դաս** 4, **էջ** 33
«Ես և շրջակա աշխարհը» Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան մաս 1

1. Ուսուցիչը դասը սկսում է «Հրաշալի բառը» պատմվածքի ընթերցմամբ, որից հետո ծավալվում է քննարկում հարցերի միջոցով: Կարևոր է, որ երեխաները գիտակցեն, հասկանան քաղաքավարի խոսքի, դիմելաձևի արժեքը, կարողանան դիտարկել, տարբերակել և մեկնաբանել օրինակելի և սխալ վարքը: Այս առաջադրանքը ապահովում է միջառարկայական կապը **Մայրենիի** հետ: Պետք է անդրադարձ կատարել նաև «**Անհատ և հարաբերություններ**», ինչպես նաև «**Պատճառ և հետևանք**» խաչվող հասկացություններին:
2. Հաջորդ առաջադրանքն առնչվում է բարեկրթության կանոններին: Ուսուցիչը խմբերին բաժանում է այդ կանոնների ցանկը՝ կտրտած նախադասություններով, առաջարկում է գտնել և միացնել նախադասությունների կեսերը և սոսնձել թղթին: Այնուհետև հարցերով կազմակերպում է քննարկում: Շատ կարևոր է, որ այդ քննարկման արդյունքում երեխաները հասկանան՝ պետք է բարեկիրթ լինել ամենուր՝ տանը, դպրոցում, փողոցում:

3. Ուսուցիչն ընթերցում է «Նվերը» պատմվածքը[1] (էջ 33), հետո ծավալում է հարցերով քննարկում, առաջարկում է գտնել այնպիսի ավարտ, որ հերոսները հաշտվեն: Կարևոր է, որ դասարանում ծավալված քննարկումը լինի անկաշկանդ, որ երեխաները մի անգամ ևս հասկանան արարքներից բխող հետևանքները: Սա կապահովի նաև **ներառարկայական կապը** («Արարք և հետևանք»): Անդրադարձ պետք է կատարել «**Պատճառ և հետևանք» խաչվող** հասկացությանը:
4. Այս առաջադրանքը աշակերտները կատարում են զույգով: Ուսուցիչը զույգերին բաժանում է իրավիճակներով քարտեր, առաջարկում է նրանց գտնել ընդհարման պատճառները, մտածել այնպիսի պատասխաններ, որ խուսափեն վեճից, իսկ իրենց պատասխանները ներկայացնեն դերախաղով:
   Նպատակին հասնելու համար պետք է կատարել քննարկում հարցերի օգնությամբ: Շատ կարևոր է, որ երեխաները քննարկման ընթացքում ազատ խոսեն այն դժվարությունների մասին, որոնք կարող են ծագել դերաբաշխում կատարելու ընթացքում: Աշակերտներն այս քննարկումից հետո պետք է ինքնուրույն կարողանան կատարել եզրահանգումներ, հասկանան, որ միասին աշխատելիս պետք է լսեն ընկերներին, ինչ-որ հարցերում կարողանան զիջումներ կատարել: Այս վարժությունը խթանում է ստեղծագործական, վերլուծական մտածողությունը, նպաստում է զույգով կամ խմբով աշխատելու, համագործակցային կարողության մշակմանը, նրբանկատ վարքագծի, բարեկիրթ պահվածքի ձևավորմանը:
   Որպես դասի ավարտ՝ ուսուցիչը առաջարկում է ընթերցել ներկայացված փոքրիկ տեքստը, կշռադատել, բացատրել ներկայացված ասացվածքը:
   Ամբողջ դասի ընթացքում առկա են միջառարկայական կապեր՝ **Մայրենիի**, **Արվեստի** հետ
5. Տնային աշխատանքը կատարել տետրերում, իսկ հնարավորության դեպքում (եթե կա համակարգիչ, ինտերնետ) կարելի է տրամադրել նաև այս հղումը՝ https://learningapps.org/display?v=p3ng12qgn21
6. Ձևավորող գնահատում:

[1] Լ. Ալեքսանյան, Ն.Թորոսյան «Ես և շրջակա աշխարհը» 3-րդ դասարան